ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՏԻՐՈՒՀԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 418-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Տիրուհի Այվազյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Տիրուհի Այվազյանի դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020 թ. հունիսի 2-ին:

2. Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի սահմանադրականությունն այնքանով, որքանով հիշյալ հոդվածի շրջանակներում չի ապահովվում նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման հնարավորություն, այն դեպքում, երբ քրեական գործի շրջանակներում հաստատվել է փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելու փաստը, հանցագործության համար մեղադրվող անձը՝ փորձագետը, ընդունել է իրեն առաջադրված մեղադրանքը, և զուտ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով քրեական գործի կարճման արդյունքում առկա չէ օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատված փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու փաստը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածը փորձագետի եզրակացության կեղծ լինելը՝ որպես նոր երևան եկած հանգամանք, պայմանավորում է **միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռով:** Արդյունքում՝ դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմն ամբողջությամբ չի ծառայում արդարադատության իրականացմանը և արդար դատաքննության իրավունքին, քանի որ օրենսդիրը երաշխավորում է անօրինական ապացույցի հիման վրա կայացված դատական ակտի օրինականությունը, ինչն անհամատեղելի է Սահմանադրության 61-րդ հոդվածին:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի, մասնավորապես, դիմողի նկատմամբ կայացված դատական ակտերի ուսումնասիրության ու վերլուծության արդյունքներից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն ամրագրում է, որ Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են նույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր: Նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է. «Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին»:

Սահմանադրական դատարանը գործում առկա՝ «Դատական ակտը վերանայելու վերաբերյալ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» Վճռաբեկ դատարանի՝ 27.12.2019 թ. որոշման ուսումնասիրության արդյունքում փաստում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կարճման, քանի որ դիմողը, ըստ էության, բարձրացնում է վիճարկվող դրույթների կիրառման իրավաչափության հարց:

Այսպես. «Դատական ակտը վերանայելու վերաբերյալ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» Վճռաբեկ դատարանի՝ 27.12.2019 թ. որոշման ուսումնասիրությունից բխում է հետևյալը. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով քրեական գործի նյութերը Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով նոր երևան

եկած հանգամանք հանդիսանալու մասին դիմողի փաստարկներին, դրանք անհիմն է համարել ոչ թե միայն այն պատճառաբանությամբ, որ Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը փորձագետի եզրակացության կեղծ լինելը պայմանավորում է միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռով, այլ նաև հարցը դիտարկել է Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վերաբերյալ դիմողի ներկայացրած փաստարկների լույսի ներքո և գտել է, որ դիմողը չի ապացուցել, որ փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելու հանգամանքն իրեն չէր կարող հայտնի լինել գործի լուծման պահին:

Վերոգրյալից բխում է, որ Վճռաբեկ դատարանն, ըստ էության, չի բացառել, որ Օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ի թիվս այլնի, ներառում է նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռից տարբերվող այլ ապացույցներ, որոնցով կհաստատվեր փորձագետի եզրակացության կեղծ լինելը: Պարզապես Վճռաբեկ դատարանն այս առումով փաստել է, որ դիմողը չի ապացուցել, որ փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելու հանգամանքն իրեն չէր կարող հայտնի լինել գործի լուծման պահին:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի համար անբարենպաստ հետևանք առաջացրել է ոչ թե վիճարկվող նորմի ենթադրյալ հակասահմանադրականությունը, այլ այն հանգամանքը, որ **Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ դիմողը չի ապացուցել, որ փորձագետի եզրակացության ակնհայտ կեղծ լինելու հանգամանքն իրեն չէր կարող հայտնի լինել գործի լուծման պահին:** Այսինքն՝ դիմողն, ըստ էության, վիճարկում է դատական ակտի իրավաչափությունը կամ, որ նույնն է՝ բարձրացնում է իրավունքի կիրառման հարց:

Բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները Սահմանադրական դատարանը մերժում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Տիրուհի Այվազյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 418-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

30 նոյեմբերի 2020 թվականի
ՍԴԱՈ-218